

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

Շուշուայ հասարակական կեանքը դիտողը որքան էլ լաւատես լինի, բայց և այնպէս իրական կեանքի մէջ տեղի ունեցող երևոյթները և դրանց խորն ուստամասիրութիւնը ստիպում են շատ անդամ խոստովանել, որ ժամանակակից կեանքը այնպիսի յատկանիշներ ունի, որոնց համար կարելի է կարմրել միայն։ Շուշուցին հակուած է կարծելու, որ հետեւող ժողովուրդ է, սակայն ցաւալի է տեսնել, որ մեր ժողովուրդը չէ հետեւում օտարի խելացի անտեսագիտութեան տոկուն և համբերատար մտքի յառաջադիմութեան։ Բայց երեխային յատուկ բնաւորութեամբ հետեւում է օտար տարազներին, ձևերին և մողաներին։ —Շուայլութիւնը իւր կործանող թերը աարածել է Շուշուցու վրայ։ Ռուսաց և Եւրոպական գործարանների արտարեսած մետաքսէ կտորներ սպառեցնողը կարծէք մեր քաղաքն է։ —Որքան ցաւալի, այնքան և ծիծաղելի է տեսնել թաւշեայ բազմերանգ կտորներով հագնուած մեր կանացի սեռը... Կարծէք մէկը միւսից գերազանցել են ուզում պճաւասիրութեամբ, զարդարանքով, վերջին տարազով... Քանդել աչքի ընկնելու համար, ոչնչացնել՝ պարձենալու համար, ահա մեր կանացի սեռի յատկութիւնը։ Ինչ հոգ, թէ հայրերը, ամուսինները կրելով կեանքի բոլոր դառնութիւնները, տիտուր, յուսահատ, օրուայ հաց ձեռք բերելու վրայ են մտածում։ Միթէ այդ տեսակ երևոյթներից պէտք է եղրակացնենք, թէ դրանով մեր գեղեցիկ սեռը մի մեծ քայլ անելու է պատրաստուամ, թէ դրանով նրանք իրանց անբովանդակ կեանքի մէջ մի մեծ փոփոխութիւն են մտցնում։

Մի հասարակութեան բարոյական և մտաւոր բարձրութիւնը չափուած է նրանով, թէ որքան նա լուրջ հետաքրքրութիւն է ցոյց տալիս դէպի հասարակական ամեն մի խնդիր, գործնական մասնակցութիւն է ցոյց տալիս դէպի ընդհանուրի շահը ուղղուած գործունէութեան մէջ։

Ակամայ հազար ու մի մտքեր են ծնում գլխիդ մէջ, երբ փողոցներում տեսնում ես ցնցուիններով ծածկուած, նիհարած, դէմքով, քաղցամահ լինելու վատանգի ազգեցութեան տակ ճնշուած կիսամերկ մարդկանց և կանանց, որոնք կրծքին սեղմելով իրանց դժբաղու մանուկներին, պատերի տակ ամօթից դողալով խեղտուած ձայնով ողորմութիւն են աղերսում մի կտոր չոր հաց ձեռք բերելու համար... Ամենքս նայում ենք, և շատ անդամ չնչին օգնութիւնն էլ մոռանալով անցնում ենք՝ չմտալութան

ծելով, «ը այդ տառապեալների, խեղճերի համար հարկաւոր է կանոնաւոր հոգս տանել: Մեր դէվիզը, մեր բնաւորութեան յատկանիշն են «փրաքանչիւրն իր համար.» բայց արդեօք այսպէս պիտի մտածենք,—չենք կարծում... Հասարակութիւնը ինքը պիտի մտածէ իր աղքատների համար, պէտք է ինքը կազմակերպէ խնամատարութեան ձեւ:

Ներկայումս Ռումանանում առանձին ուշադրութեան է արժանացել աշխատանքի տներ հիմնելու գաղափարը: Աշխատանքի տների նպատակն է միջոց տալ այն մարդկանց, որոնք անգործ մնալով աղքատացել են ու անընդունակ են նորից ոտքի կանգնել կանոնաւոր աշխատանքի միջոցով: Աշխատանքի տների կազմակերպութիւնը բարդ գործ չէ, բայց պահանջում է եռանդուն ղեկավարներ, որոնք կարողանան վարուել մարդկանց հետ և կազմակերպել կանոնաւոր տնտեսական գործունէութիւն: Ցանկալի կը լինէր, որ աշխատանքի տան ինդիրը Շուշուայ հասարակութեան ամենամեծ հոգսերի առարկան դառնար: Մեր հասարակութիւնը պէտք է լաւ իմանայ, որ աղքատութեան հետեանքները չեն սահմանափակում միայն աղքատների շրջանում աղդելով, այլ անցնում են ընդհանուրի վրայ: Մի հասարակութիւն կարող է միայն այն ժամանակ երջանիկ և հանգիստ լինել, եթե նրա բոլոր մասերը ապահով և երջանիկ են:

Շուտով պիտի սկսուին ձայնաւորների ընտրութիւնները քաղաքին համար: Ամենքս հետաքրքրութեամբ սպասում ենք, թէ մվեր են լինելու այս նոր ընտրութեան ձայնաւորները: Շատ ժամանակ չէ, որ Շուշին ստացել է քաղաքային ինքնավարութիւն, բայց այդքան ժամանակումն էլ, հաւանական է թուռ մեզ, որ տեղացի հասարակութիւնը հասկացած լինի թէ ինչ մեծ ծառայութիւն կարող են անել քաղաքային դուման և վարչութիւնը ամբողջ քաղաքին, որը տարաբախտաբար, դեռևս անսախանձելի դրութեան մէջ է: Մեր հասարակութիւնը պէտք է հասկանայ, որ քաղաքային շահերին յաջողութեամբ ծառայելը կախուած է ընտրութիւններից: Եթէ ձայնաւորների ընտրութիւնները յաջող կը կատարուին, այն ժամանակ միայն կարելի է յոյս ունենալ, որ դումայի մէջ կը բազմեն բանիմաց, բարեխիղճ մարդիկ, որ վարչութիւնը կը կազմուի արժանաւոր գործողներից:

Ցուսով ենք, որ գէթ այս ընտրութիւնների ժամանակ կօգտուեն անցեալ փորձից, և եռանդուն ու գիտակցական ընտ-

ըութիւններ կանեն և կաշխատեն՝ ստեղծել մի այնպիսի մարմին, որ ընդունակ լինի համայնքի ընդհանուր շահերին նուիրուած գործել և ինքնավարութեան բարեփները տալ քաղաքին:

ՊՕՂ. ԶԱՅ.

ԱԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բագուի սոսկալի կոտորածից թշուառացածների օգտին իմ ծխականների մէջ հաւաքեցի 57 ոռւբլի 50 կոպէկ, որ ներկայացնելով նամակիս հետ՝ խնդրեմ ուղարկել ըստ պատկանելոյն:

Նուիրողները սոքա են.—Մ. Խ. 5 ոռւբլի, Տ. Խ. 5 ո., Խ. Թ. 5 ո., Վ. Թ. 5 ո., Լ. Վ. 5 ո., Ի. Տէր Խորայէլեանց 5 ո., Յ. Վ. 5 ո., Գ. Վ. 3 ո., Ի. Ն. 1 ո., Տ. Յ. 5 ո., Յար. Մո. 3 ո., Յ. Լիսինեանց 2 ո., Ս. Ղ. 3 ո., Ա. Սարդարեանց 1 ո., Գր. Տ. Պ. 1 ո., Գ. Ճէպէյեանց 1 ո., Նշան Շէկոյեանց 50 լ., Բ. Ա. 1 ո., Ս. Խիզանեանց 1 ո., ընդամէնը յիսուն և հօթը ոռւբլի յիսուն կոպէկ:

Գիւտ ա. ք. Աղանեանց.

6 մարտ, 1905, Թիֆլիս

Խմբագրութիւնս ստացուած 57 ոռւբլի 50 կոպէկը ամսոյս 7-ին յանձնեց Թիֆլիսի պ. քաղաքագլխին: